132 Շուրջս կենաց հուզյալ ծովուն

1. Շուրջս կենաց հուզյալ ծովուն
Լացով իմ աչքս կնայի,
Բայց ինձ կուգա ձայն մը սիրուն
Եվ այն կըսե՝ եկո՛ւր Ինձի:

2. Կըսե, թե ուր նեղյալ հոգվույս
Հանգստություն կգտնվի:
Ո՞հ, երբ կըլլամ հոգնած, անհույս,
Ի՞նչ քաղցր այն ձայն՝ եկո՛ւր Ինձի:

3. Երբ որ վախճանս կմոտենա,
Ու սիրտս շատ կզարհուրի,
Մահվան երկյուղ վրաս կուգա,
Այն ձայն կըսե՝ եկո՛ւր Ինձի:

4. «Աշխարհս կանցնի, եկո՛ւր Ինձի,
Երկիրս բնավ հանգիստ չունի,
Աչքերդ դեպի երկինք վերցո՛ւր,
Ես եմ բաժինդ, եկո՛ւր Ինձի»:

5. Ո՞վ ձայն գթած, ո՛վ ձայն սիրուն,
Ցավ կամ տագնապ երբ վրաս հասնի,
Տո՛ւր խրախույս Դուն իմ հոգվույս,
Մեղմով ըսե՝ եկո՛ւր Ինձի: